ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 71

ք. Մարալիկ 29 մայիսի 2012 թվական

## ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԼԵՎՈՆ ԵՐԵՄԻ ՍԱՐՈՅԱՆԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Նոր թաղամաս 10-րդ փողոց N 15 տան բնակիչ Լևոն Երեմի Սարոյանի 25.06.2012 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրեն հատկացված ք. Մարալիկ Նոր թաղամաս 11-րդ փողոց N 16 հասցեի հողամասի իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, ինչպես նաև օրինական հատկացված 0.10 հա հողամասին կից ավել օգտագործվում է 0.00638 հա հողամաս, ուստի ղեկավարվելով □Տեղական ինքնակառավարման մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, □Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տների կարգավիճակի մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով

## <u>Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ</u>

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Լևոն Երեմի Սարոյանի (ծնված 25.10.1937թվականին) ք. Մարալիկ Նոր թաղամաս 11-րդ փողոց N 16 հասցեի օրինական հատկացված 0.10 հա հողամասի, ինչպես նաև օրինական հատկացված 0.10 հա հողամասին կից ավել օգտագործվող 0.00638 հա հողամասի գույքային իրավունքները վերականգնել և ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի Անիի սպասարկման գրասենյակ ՝ պետական գրանցում կատարելու նպատակով:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ